ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 հուլիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

104
(2954)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՆԹԱԴՐՅԱԼ ՕՐԻՆԱԽԱԽՏ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿՆԵՐԵՆ

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը օգոստոսի 5-ին հրապարակելու է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վահե Դոլմազյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով որոշումը: Ու մինչ ԲԴԽ-ն խորհրդակցական սենյակում քննում է Դոլմազյանի վարքը, կատարած քայլերի օրինականությունը, «Ժողովուրդ» օրաթերթին որոշ տեղեկություններ հասան ԲԴԽ նախնական հավաքական տրամադրությունների մասին: Ըստ այդմ՝ ամենայն հավանականությամբ, Վահե Դոլմազյանի լիազորությունները չեն դադարեցվի, ԲԴԽ-ն, թերեւս, կբավարարվի նրան միայն նկատողություն տալով:

Թեեւ ԲԴԽ-ն հուլիսի 16-ի նիստում քննարկեց ԱՆ քրեակատարողական ծառայության պետ Ամբակում Գրիգորյանի՝ այս տարվա մարտին ներկայացված հաղորդումը այն մասին, որ դատավոր Դոլմազյանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, բայց լավ է տրամադրված ենթադրյալ օրինախախտ դատավորի նկատմամբ:

Իսկ ինչի մասին է խոսքը. ՀՀ ԱՆ ներկայացուցիչը ԲԴԽ-ում հայտնեց. ««Կարճաժամկետ մեկնում տրամադրելու մասին» որոշման շրջանակում մեկնման վերադարձի համար անհրաժեշտ ժամանակ տրամադրելու եւ մեկնման իրականացման եղանակը որոշելու լիազորության բացակայության պայմաններում դատավորը լուծել է այդ հարցերը...Ինչի իրավասություն չի ունեցել:

Դատավորի կողմից համապատասխան վարքագծի կանոնների խախտումները թույլ են տրվել կոպիտ անփութությամբ»,- հուլիսի 16-ի նիստում հայտարարեց ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչը՝ կոչ անելով ԲԴԽ-ին բավարարել ԱՆ միջնորդությունը:

Հիշեցնենք, որ խոսքը վերաբերում է պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի՝ ԱԺ «կարճաժամկետ մեկնման» հանգամանքներին, որի ընթացքում Տոնոյանը հասցրել էր տեսակցել մորը՝ առանց ձեռնաշղթաների:

Դատավոր Դոլմազյանը, իհարկե, չի ընդունում իրեն մեղսագրվողը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Դոլմազյանի մասով ներողամտությունը ունի քաղաքական շարժառիթներ, քանի որ նա քննում է քաղբանտարկյալ Արմեն Աշոտյանի, Դավիթ Տոնոյանի ԲԴԽ նախկին նախագահի եւ էլի այլ քաղաքական բնույթի գործեր ու քննում է ցանկալի ուղով, արդյունքները քաղաքական իշխանությանը բավարարում են: Ասել է թե՝ Դոլմազյանը իշխանության «սրտի» դատավորն է, դրա համար նրան, թերեւս, միայն նկատողություն կտան:

Հակակառուպցիոն կոմիտեն դեռ ստուգում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի ծնողների համար առանձնատուն կառուցելու գործընթացի օրինականությունը: Գրեթե երկու ամիս է անցել, ինչ նախաքննական մարմինը գործընթաց է սկսել, սակայն սայլը տեղից դեռեւս չի շարժվում: Գրել էինք, որ Գնել Սանոսյանի ծնողների համար առանձնատուն կառուցելու գործընթացի օրինականությունը ստուգում է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ Արտակ Պողոսյանը, որն անձամբ է ղեկավարում կառույցի օպերատիվ գործողությունները: Ինչպես հայտնի է՝ Հակակոռուպցիոն կոմիտեում «Հետքի» հրապարակումից հետո ստուգումներ են սկսվել՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի ծնողների առանձնատան կառուցման փաստով: Տեղեկությունը ArmLur.am-ին հայտնել էին Հակակոռուպցիոն կոմիտեի մամուլի ծառայությունից: Հիշեցնենք, որ, մինչեւ նախարար դառնալը արտագնա աշխատանքով զբաղվող (խոպանչի) Սանոսյանի թոշակառու մայրը մոտ 230 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ առանձնատուն է կառուցում: Սանոսյանի խոսնակ Սոնա Հարությունյանը նախարարի անունից հայտնել էր, թե առանձնատունը կառուցում են Սանոսյանի եղբայրները, եւ այնտեղ կոռուպցիա փնտրելը զուր ջանք է, բայց նա այդպես էլ չէր պարզաբանել՝ մինչեւ նախարար դառնալը, երբ Սանոսյանն էլ եղբայրների հետ արտագնա աշխատանքով էր զբաղվում, ինչու 3 եղբայր միասին չէին կարողանում մինչեւ 2018 թվականը մայրաքաղաքում առանձնատուն կառուցել: Հուսանք՝ այս գործը մինչեւ վերջ կքննվի, այլ ոչ թե մյուս աղմկահարույց դեպքերի նման «ծածկադմբոցի» կարժանանա:



Ադիկոլ Փաշինյանի իշխանությունը որոշել է քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հերթական իմիտացիան բեմադրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունները քաղաքական որոշում են կայացրել «քրեական ենթամշակույթի» անվան տակ, քրեական բարքերով ապրող բոլոր անձանց նկատմամբ որոշակի պատժիչ գործողություններ ձեռնարկել՝ հանրությանը դա ներկայացնելով իբրեւ քրեական բարքերի դեմ իրականացվող խիստ պայքար: Խոսքը հատկապես քրեական աշխարհի այն անձանց մասին է, որոնք վերջին շրջանում աղմկահարույց դեպքերի կիզակետում են հայտնվել: Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի մեկնարկը տվել են «Չաղ Ռուստամ»-ի միջոցով: ArmLur.am-ը առաջինն էր հայտնել, որ կիրակի օրը իրավապահները, «գետնին տապալելով», ձերբակալել են քրեական հեղինակություն «Չաղ Ռուստամին»՝ քրեական հեղինակություն «Ֆազի»՝ Սերգեյ Գրիգորյանի սպանության գործով: ՆԳՆ-ից եւս պաշտոնապես հաստատեցին ArmLur.am-ի տեղեկությունը: Երեկ իրավապահները հիշել էին նաեւ քրեական հեղինակություն «Նորատուսցի Ալիկին»՝ Ալիկ Բանդուրյանին: ArmLur.am-ը հայտնել էր, որ իրավապահները երեկ՝ առավոտյան, դիմակավորված մտել են Տիչինայի փողոցում գտնվող «ԼԱ ԴԵՖԱՆՍ» հյուրանոց, աշխատակիցներին պառկեցրել հատակին ու խուզարկություն սկսել: Նշենք, որ հյուրանոցը կապում են քրեական հեղինակություն Ալիկ Բանդուրյանի՝ «Նորատուսցի Ալիկի» անվան հետ: Ըստ մեր տեղեկությունների՝ խուզարկությունը կապված է եղել Սեւանի ավագանու անդամ Արսեն Աֆինյանի սպանության հետ, որ տեղի էր ունեցել օրեր առաջ Սեւանում, եւ որի «հեղինակը» «Նորատուսցի Ալիկի» եղբոր՝ Արայի որդին էր՝ Լեւոն Բանդուրյանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը «Ֆեստիվառ» մշակութային նախագծի համար 180 մլն դրամ գումար է հատկացրել: Այդ նախագծի շրջանակում 3 համերգային ծրագիր պետք է անցկացվի, որոնցից առաջինը շաբաթ օրը տեղի ունեցավ Գյումրիում՝ Թաթայի համերգի ուղեկցությամբ, մյուս երկու միջոցառումները պետք է կայանան օգոստոսի 10-ին՝ Իջեւանում, որի ընթացքում նախատեսվում է «Կարեն Սեւակ» խմբի երաժշտական ելույթը, ինչպես նաեւ ներկա կլինեն վրացահայ կատարողներ. իսկ ահա օգոստոսի 24-ին Եղեգնաձորում կայանալիք համերգին ելույթ կունենա «Լադանիվա» խումբը: Հանրային հեռուստաընկերությունը «Ֆեստիվառի» նախագիծն իրականացնելու համար 180 մլն դրամի դրամաշնորհ է ստացել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ Գյումրիում շաբաթ օրը՝ «Ֆեստիվառ» փառատոնի շրջանակում համերգի ժամանակ, Թաթայի եւ նրա հետ ելույթ ունեցող խմբի ծախսերի ապահովման համար 30 մլն դրամ է հատկացվել. համերգային ծրագրի հաղորդավարներին 500 հազար դրամ է հատկացվել, DJ ծառայության համար՝ 400 հազար դրամ: Պրոդյուսերական աշխատանքների համար հատկացվել է 800 հազար դրամ, անձնակազմի ադմինիստրատիվ աշխատանքների համար՝ եւս 800 հազար դրամ: Լեդ էկրանի ձեռքբերման համար շուրջ 5 մլն 430 հազար դրամ է տրամադրվել, իսկ ձայնային սարքավորումների համար՝ 12 մլն 510 հազար դրամ, լուսային սարքավորումների համար 7մլն 950 հազար դրամ է հատկացվել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԷՐԴՈՂԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եթե Թուրքիան ուժեղ լինի, ապա կկարողանա մտնել Իսրայել, ինչպես նախկինում՝ Լեռնային Ղարաբաղ եւ Լիբիա»: Երեկ հերթական հոխորտալից հայտարարությունն էր արել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը՝ Ռիզե քաղաքում իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության տարածաշրջանային ակտիվի հետ հանդիպման ժամանակ:

Այս հայտարարության վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի հետ:

-Պարոն Սաֆրաստյան, ինչպե՞ս կմեկնաբանեք Էրդողանի այս հայտարարությունը՝ հրապարակային ինքնախոստովանությո՞ւն, թե՞ սպառնալից հայտարարություն:

-Թուրքիան առաջին անգամ չէ, որ խոստովանում է՝ միջամտել է, նույնիսկ՝ իրական մասնակցություն է ունեցել արցախյան պատերազմում, բայց Էրդողանի հայտարարության մեջ կարեւորն այն էր, որ նա սպառնում է Իսրայելին: Սա համարում եմ սադրիչ հայտարարություն. ինչ նպատակով է նա դա անում՝ չեմ կարող ասել: Թուրքիայում դժգոհության մեծ ալիք կա, տնտեսության վիճակը վատ է, եւ այս առումով նա նպատակ ուներ շեղելու հանրության ուշադրությունը ոչ բարվոք իրավիճակից:

Պատահական չէ, որ այս հայտարարությունը հեռարձակվեց նաեւ թուրքական եթերով: Այստեղ կան նաեւ մերձարեւելյան քաղաքական հաշվարկներ, որ Թուրքիան փորձում է իրեն ներկայացնել որպես իսլամական աշխարհի առաջնորդ, փորձում է Մերձավոր Արեւելքում իր տեղն ու դերը բարձրացնել, սա էլ պետք է հաշվի առնել:

-Իր հերթին էլ Ադրբեջանի ՊՆ-ն այսօր (խմբ.) հայտարարությամբ էր հանդես եկել, թե Թուրքիայի ՋՈՒ-ն չի մասնակցել 44-օրյա պատերազմին, այսինքն՝ Բաքվից՝ իբրեւ հերքում են Էրդողանին:

-Մենք իրականությունը գիտենք ինչ էլ Ադրբեջանը հայտարարի: Փորձում են իբրեւ թե Էրդողանին հերքել, բայց իրողությունը բոլորն էլ գիտեն:

-Պարոն Սաֆրաստյան, իսկ Էրդողանի այս հոխորտանքներն ինչո՞ւ միջազգային դերակատարների կողմից կոշտ արձագանք չստացան:

-Իսրայելից կոշտ արձագանք եղավ, Իսրայելի ԱԳՆ-ն խորհուրդ էր տալիս Էրդողանին հիշել, թե ինչ եղավ Սադամ Հուսեյնի հետ, ով նմանատիպ հայտարարություններով էր հանդես գալիս ու իր պաշտոնավարումն ավարտեց կախաղանի վրա:

Ես կարծում եմ՝ լուրջ խաղացողները՝ Իրանը, ԱՄՆ-ն, հասկանում են, որ սրանք սադրիչ հայտարարություններ են, բայց դժվար հետեւեն լուրջ քայլեր Թուրքիայի կողմից: Էրդողանն իր խաղն է խաղում՝ ներքին լսարանի համար, իսլամական աշխարհում իր հեղինակությունը բարձրացնելու համար, սա սադրիչ խաղ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՔՊ–ԱԿԱՆ ԹԱՂԱՊԵՏԸ

Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականին:

Մինչեւ թաղապետ դառնալը Բալայանը, 1996 թվականից սկսած, 12 տարի աշխատել է որպես բուժակ, ապա 7 տարի «Երեւան» բժշկական կենտրոնում՝ որպես բաժնի վարիչ, ապա փոխտնօրեն, իսկ 2015-ից 2018 թվականներին՝ նույն բժշկական կենտրոնի տնօրեն:

2018-2021 թվականներին աշխատել է Երեւանի Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմում՝ որպես վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, ապա 2021-2022 թվականներին աշխատել է Երեւանի Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմում՝ որպես վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատար, ապա նշանակվել է վարչական շրջանի ղեկավար:

Իսկ ի՞նչ ունեցվածք է կուտակել այս տարիներին Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հայկ Բալայանը.

Բալայանը եւ կինը՝ Փիրուզա Մխիթարյանը, որեւէ անշարժ գույք եւ տրանսպորտային միջոց չեն հայտարարագրել, սակայն Հակոբ Բալայանը եւ կինը հաշվառված են Էրեբունի վարչական շրջանում՝ նույն փողոցի տարբեր հասցեներում: Հակոբ Բալայանի հետ նույն հասցեում բնակվում է նաեւ դուստրը:

Բալայանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 85 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 5 մլն 100 հազար դրամ: Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 9 մլն 533 հազար դրամ, որն աշխատանքի վարձատրություն է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկից:

Նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

ԿԿՀ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՎ

ՀՀ Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ռուստամ Բաքոյանն ազատվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից նշանակվող հնարավոր վարչական տուգանքից:

Բանն այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ 2023 թվականի նոյեմբերին անդրադարձել էր Ռուստամ Բաքոյանի՝ 2022 թվականի հաշվետու տարվա հայտարարագրին, եւ նշել էինք մի քանի անհամապատասխանություններ, որոնք մասնավորապես առնչվում էին նրա ֆինանսական միջոցներին:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննության էր առել Թագուհի Թովմասյանին ապօրինաբար լիազորություններից զրկելուց հետո՝ հանձնաժողովի նախագահ դարձած Ռուստամ Բաքոյանին առնչվող այդ հրապարակումը:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Բաքոյանը հայցվել է պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Մասնավորապես, Հանձնաժողովն անդրադարձել է պատգամավորի դրամական միջոցների՝ տարեսկզբին եւ նախորդ տարեվերջին առկա մնացորդների անհամապատասխանություններին, հրապարակմամբ նշված՝ Ռուստամ Բաքոյանի առնչությանը եւ 2019 թվականին ձեռք բերված բնակելի տանը: Սրա վերաբերյալ Ռուստամ Բաքոյանը 2024 թվականի մարտի 14-ին Հանձնաժողով է ներկայացրել իր պարզաբանումները, որոնց գնահատման արդյունքում Հանձնաժողովը, հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը, գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության եւ օրինականության վերաբերյալ կասկածների փարատված լինելու հանգամանքը եւ ենթադրյալ իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետի անցած լինելը, որոշել է ավարտել ստուգումը՝ հայտարարատուին առաջարկելով Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Մայրաքաղաքի այգիների տարբեր վարձակալության պայմանագրեր տարիներ շարունակ խնդրահարույց են եղել: Քաղաքապետ Տիգրան Ավինյանն ընդգծել է՝ հիմա անհրաժեշտ է վարձակալների հետ քննարկել այն հանգամանքը, որ այգիների տարածքները վերջիններիս բիզնես նպատակ լինելուց բացի՝ նաեւ մարդկանց զբոսանքի համար են:

«Եթե համաձայնության գալ չենք կարող, ապա պետք է նոր մրցույթ հայտարարվի, խզվեն նախկին պայմանագրերը, քանի որ վստահ չեմ՝ բոլորը կցանկանան ավելի մեծ վճարով ու հին տրամաբանությամբ շահագործել տարածքները»,-նշել է Տիգրան Ավինյանը:

ԲԱՔՎԻՑ ՀԱԿԱԴԱՐՁԵԼ ԵՆ

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, անդրադառնալով Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությանը, որ Անկարան պաղեստինցիներին օգնելու համար կարող է մտնել Իսրայել այնպես, ինչպես դա արել է Լեռնային Ղարաբաղում եւ Լիբիայում, պնդել է, որ թուրքական զորքերը մասնակցություն չեն ունեցել Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններին: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները՝ վկայակոչելով Ադրբեջանի պաշտպանության նախարարության հայտարարությունը:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ՝ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Հուլիսի 29-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Կիպրոս մեկնարկել է Կիպրոսի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների տարեկան համաժողովին նախարար Միրզոյանի մասնակցությամբ: Վերջինս կայացել է Կիպրոսի ԱԳ նախարարի հրավերով, միջոցառմանը ներկա են եղել շուրջ 50 դեսպաններ, ինչպես նաեւ ԱԳՆ ղեկավար կազմը:

ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը շնորհակալություն է հայտնել Կիպրոսի նախարարին հրավերի համար, որն առաջինն է իր ձեւաչափով: Արարատ Միրզոյանն ընդգծել է. «Կիպրոսի հետ մենք ունենք գերազանց հարաբերություններ եւ կարող ենք առանց կասկածի արձանագրել, որ մեր համագործակցությունը տարբեր ոլորտներում արդեն հասել է ռազմավարական գործընկերության մակարդակի: Արտասովոր է համագործակցության դինամիկան եւ միմյանց դիրքորոշումների խոր ըմբռնումը: Իմ գործընկեր նախարար Կոմբոսի հետ մենք պայմանավորվել ենք լրացուցիչ խթանել համագործակցությունը, եւ Հայաստանը ծրագրում է մշտական դիվանագիտական ներկայացուցչություն հիմնել Կիպրոսում: Կարծում եմ, որ դա նոր հնարավորություններ կտա շարունակել համադրելու ջանքերը եւ ընդլայնելու համագործակցության շրջանակները»:

«ԵՐԲ ԼՌԵԼԸ ԱՆՀՆԱՐ Է». Ս. ՖԱՐՄԱՆՅԱՆ

«Ի՞նչն է պատճառը, որ տարիներ տեւող այսքան մեծ ու անդադար աղմուկի մեջ, չնայած ստեղծված բարդագույն իրավիճակին ու հնարավոր էլ ավելի բարդ հեռանկարներին, այդպես էլ ասպարեզ չի բերվում իրավիճակի հաղթահարման իրատեսական այլընտրանքային քաղաքական ծրագիր, իսկ «մեղավորի» դերում այդ նույն քաղաքական աղմկարարների կողմից, ինչպես միշտ, կարգվում է ժողովո՛ւրդը»: Այս մասին իր էջում գրել է ԱԺ նախկին պատգամավոր Սամվել Ֆարմանյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Իշխանության հետ ամեն բան պարզ է: Այն շարունակում է իրագործել իր ձախավեր ծրագիրը:

Իրական պատճառը նախեւառաջ այն է, որ ստեղծված իրավիճակն իսկապես բարդ է, աննախադեպ բարդ ու խճճված: Երանի, թե մեր երկրում գտնվեին գոնե 3-4 հոգի, ովքեր ի վիճակի կլինեին ՃԻՇՏ գնահատել ստեղծված իրավիճակն ու առկա իրատեսական հեռանկարները եւ այդ ամենի համատեքստում Հայաստանի ու հայ ժողովրդի ամենանախընտրելի ու իրատեսական ռացիոնալ շահը, դրա իրացման անխոցելի քաղաքական մարտավարությունը: Ինքնակոչ անհամար «Սողոմոն իմաստուններին» մի կողմ թողած:

Մնացածը դատարկ աղմուկ է, ինչը բացառապես օգնում է օրվա իշխանություններին՝ հանրության նորանոր շերտերի մղելով անհուսության, անտարբերության, հիասթափության ու հանրային-պետական կյանքից օտարվածության»:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻՆ

ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դեկոտինին X-ում պատասխանել է Նիդեռլանդներում Ադրբեջանի դեսպան Ռահման Մուստաֆաեւի՝ հայերի եւ օկուպացված Արցախի մասին մեկնաբանություններին, որոնք նա արել էր այն բանից հետո, երբ France 2 հեռուստաալիքի հաղորդավարը Փարիզում Օլիմպիական խաղերի բացման ընթացքում Հայաստանի հավաքականի ներկայացման ժամանակ խոսել էր Արցախի անկման մասին:

«Եվ, իհարկե, մեր հայ ընկերները... Հայաստանը պատմականորեն ֆրանսիացիների սրտին մոտ երկիր է: Անցյալ տարին հայ ժողովրդի համար սգո եւ Ադրբեջանի ձեռքերում հայտնված Լեռնային Ղարաբաղի անկման տարի դարձավ», - ասել էր հաղորդավարը, երբ կադրերում հայտնվել են հայ մարզիկները:

Նիդեռլանդներում Ադրբեջանի դեսպանը, սրան արձագանքելով, գրել էր. «Հայերը, իհարկե, ձեր ընկերներն են: Բայց ոչ թե սկսվել է Ղարաբաղի «անկումը», այլ սկսվել է նրա նորացումն ու վերածնունդը, բացվում են նրա համար հրաշալի հեռանկարներ: Եվ եթե հայերը «լավ տղաներ» լինեն, ապա կկարողանան օգտվել այդ հեռանկարներից»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀՌ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Հանրային ռադիոյի նախկին տնօրեն Գարեգին Խումարյանը գրառում է արել, որը համառոտ ներկայացնում ենք ստորեւ:

«Հարգելի՛ բարեկամներ, քիչ առաջ ավարտվեց Հանրային ռադիոընկերության տնօրենի թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթը, որի հաղթողը կանխատեսելիորեն ես չեմ եւ, փաստորեն, աշխատանքի առայժմ չեմ վերադառնում:

Շատ կուզեի հաղթող մասնակցին բարի ընթացք մաղթել, բայց սա այդ դեպքը չէ: Մրցույթի արդյունքը վարչահրավական աճպարարության հետեւանք է, որը տանում եմ դատարան: Խնդիրը քննարկվել է ոլորտի մի շարք ամենահեղինակավոր մասնագետների հետ, եւ ընդհանուր պատկերացումն այն է, որ իրավիճակը պետք է պատշաճ իրավական գնահատական ստանա: Սկսում ենք բողոքարկել մրցույթի արդյունքները՝ ամենայն հավանականությամբ հենց այսօրվանից: Ընթացքը կանխատեսելի էր, հայցերը՝ վաղօրոք նախապատրաստված:

Իրավիճակի կապակցությամբ կասեմ հետեւյալը՝

Ունկնդիրներին, լրագրողական համայնքին

Այն, որ հիմա Ընկերության վրա ազդեցությունս զրոյական է, չի նշանակում, որ ռադիոյի համար այլեւս պատասխանատու չեմ: Ընդհակառակը՝ զարգացումների հետագա ընթացքը իմ ձախողման հետեւանքն է... Կհավաքվենք, հետաքրքրությամբ կլսեմ ձեր գաղափարները, կկիսվեմ ռազմավարության վերաբերյալ իմ պատկերացմամբ: Ի գործ:

Մայր ռադիոյի կոլեկտիվին

Ռադիոյի սիրելի մարդիկ, Աստված վկա, արել եմ հնարավորն ու անհնարինը, որ այսպես չլինի: Շատերիդ կողմից ինձ հաճախակի մեղսագրվող ճկունության բացակայությունը հաշիվ չէ: Մի անգամ էլ ասեմ, ու փակենք այս թեման: Բոլորիդ քաջ հայտնի հարցերից հատկապես ո՞ր մեկի շուրջ ցուցաբերեի ճկունություն: Վստահեցնում եմ՝ ձեզ պետք չէր լինի այդպիսի տնօրեն: Թրի տակով անցած ղեկավարն աղետ է իրեն վստահված մարդկանց համար: Հավատացեք՝ գիտեմ՝ ինչ եմ ասում: Իրավիճակը դիտարկեք հակառակ կողմից: Ղեկավարության փոփոխությունը հնարավորությունների պատուհան է: Հիմա ձեզանից յուրաքանչյուրը պիտի փորձի բարելավել դիրքերը, ստանալ այն, ինչն այս կամ այն պատճառով չի ստացել ինձանից: Ձեզ ցույց տվեք: Փայլեք, ինչպես հասու է միայն ձեզ՝ Ռադիոտան մարդկանց, եւ ամեն ինչ կլինի գերազանց: Իսկ եթե ընթացքն այլ ուղղությամբ սկսի զարգանալ, ինչը նույնպես բացառված չէ, ձեզ «հուշանվեր» եմ թողել: Գտեք այն: Խմբվեք դրա շուրջ: Այն պետք է որ մեղմի հնարավոր բացասական զարգացումները: Հասկացողը հասկացավ, չհասկացողին կբացատրի: Ես էլ այնպես չէ, որ հեռու եմ, 24/7՝ հասանելի: Հրաժեշտ չեմ տալիս:

Հանրային հեռարձակողի խորհրդի անդամներին

Խորհուրդ, հիրավի դուք չքնաղ եք: Ինձ փոխարինել պատրաստ մարդու ձեր եւ ձեր վերադասների փնտրտուքն ավարտվեց այն բանով, որ այս երկրում ապրող, այս հողի վրա քայլող եւ այս օդը շնչող յուրաքանչյուր ոք, ում այդ հարցով մոտեցել եք, ձեր առաջարկը համարել է անպարկեշտ, բայց դուք չեք ընկճվել, ընդլայնել եք որոնման աշխարահագրությունը եւ ի վերջո երկրի ռազմավարական տեղեկատվական ենթակառուցվածքի ղեկը հանձնել վերջին 28 տարին Պրահա քաղաքում մշտապես բնակվող ԱՄՆ քաղաքացու: Խոսքեր չունեմ: Ծափահարում եմ հոտնկայս:

Վերադասներ ասելով էլ՝ մոտավորապես, նկատի ունեմ հրապարակի առանձնասենյակներում նստող այն մարդկանց, ում մոտ որ մի երկու շաբաթ առաջ ձեր թեկնածուին տարել էիք «ստուգատեսի»: Մինչդեռ խորհրդի միակ իմաստը Հանրայինի եւ իշխանության միջեւ պատնեշ լինելն ու իշխանավորների «խածելկանեռից» Հանրայինը զերծ պահելն է: Իրենց հարկերից ամեն տարի մարդիկ 160 միլիոն դրամ ձեզ հենց դրա համար են տալիս, այլ ոչ թե «ամբողջ աշխարհում պետության առաջին դեմքերի հետ հարցազրույցները չեն ենթադրում բանավեճ» կարգի հայտարարությունների:

Մի պահ ձեռքներդ դրեք խղճներիդ. դուք 160 միլիոնի գո՞րծ եք անում: Վաղը, երբ այս ամենն ավարտվի, ու գնաք նոր աշխատանք փնրելու, ձեր CV-ների մեջ ի՞նչ եք գրելու «քի ըչիվմընթս» բաժնում...:

Հիրավի, ինչին դիպչում ենք՝ վերջում ՍՄԿԿ է դառնում:

Հանձնվելիս մարդ միշտ չէ, որ մեռնում է, բայց միշտ չեղարկում է ինքն իրեն:

Գուցե մանկամիտ հնչի, բայց մինչեւ վերջ հավատում էի, որ կհետեւեք ձեր գործընկերոջ՝ Վահրամ Մարտիրոսյանի օրինակին, ու հրաժարական կտաք... Իսկապես, խոսքեր չունեմ...»:

Նշենք, որ Հանրային ռադիոյի տնօրեն է ընտրվել Արմեն Քոլոյանը:

Որոշումը կայացրել է Հանրային հեռարձակողի խորհուրդը: Արմեն Քոլոյանի թեկնածության օգտին քվեարկել է Հանրային հեռարձակողի խորհրդի 5 անդամ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄՈՒՏՔԵՐՆ ՈՒ ԵԼՔԵՐԸ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

ՀՀ Վիճակագրական կոմիտեից տեղեկանում ենք ՀՀ պետական սահմանի անցման կետերով իրականացված մուտքերի եւ ելքերի սահմանային գրանցումների թվաքանակը, որի համաձայն 2024 թվականի հունվար-մայիս ամիսներին Հայաստան մուտք է գործել 1 մլն 624 հազար 239 մարդ, որից 704 հազար 647-ը ՀՀ փաստաթղթերով:

Ելքերի դեպքում պատկերը գրեթե նույնն է՝ 1 մլն 633 հազար 458 մարդ, որից 720 հազար 160 մարդ ՀՀ փաստաթղթերով: Համեմատելով անցած 2023 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշները՝ կարող ենք արձանագրել, որ մուտքի եւ ելքի թվերն այդքան էլ չեն փոփոխվել, սակայն ՀՀ փաստաթղթերով մարդկանց մուտքերն ու ելքերը 2024 թվականի ավելացել է գրեթե 40 հազարով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԴԻՎԻԴԵՆԴՆԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԱՌԻԹ

Շաբաթ օրը Գյումրիում բավականին թեժ էր: «Ֆեստիվառ» երաժշտական մեծ փառատոնը Գյումրի էր տարել ինչպես տարբեր հայտնի արտիստների, հանրային դեմքերի, այնպես էլ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ իշխանության տարբեր ներկայացուցիչների:

Նիկոլ Փաշինյանը համերգին մասնակցում էր կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, որը պարբերաբար տեսանյութեր էր հրապարակում այնտեղ անցկացրած ժամանցից:

ՔՊ-ական գյումրեցի պատգամավորները, ինչպես երեւում է, այս փառատոնը որոշել էին որպես առիթ օգտագործել՝ Նիկոլ Փաշինյանի աչքին բարձրանալու, նրա մոտ դիվիդենտներ հավաքելու, ու իրենց հնազանդությունը Փաշինյանին ցույց տալու համար:

ՔՊ-ական Կարեն Սարուխանյանը, որն իրեն, կարծես, Գյումրու ապագա քաղաքապետ է պատկերացնում, ինչպես նաեւ Էմմա Պալյանը հերթ էին կանգնել՝ Նիկոլ Փաշինյանին դիմավորելու ու նրա ձեռքը սեղմելու համար: Նրանց սոցցանցերի էջերը ողողված էին Նիկոլ Փաշինյանի հետ լուսանկարներով ու տեսանյութերով:

Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանը եւս առիթը բաց չէր թողնում՝ նրա աչքին բարձրանալու համար:

«Ֆեստիվառ»-ին մասնակցելու համար Գյումրի էր գնացել նաեւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ում Շիրակի մարզպետը ծաղկեփնջով դիմավորեց:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ հանրային հեռուստաընկերության նախաձեռնությամբ անցկացված «Ֆեստիվառ»-ին համերգային ծրագրով հանդես եկավ հայտնի երգիչ Թաթան, որը, ի դեպ, ընդդիմության, ինչպես նաեւ հանրության մի հատվածի կողմից շատ քննադատությունների ենթարկվեց, որ երկրում ստեղծված իրավիճակի ֆոնին՝ համերգ է տալիս, այն էլ՝ Նիկոլ Փաշինյանի ու կնոջ ներկայությամբ:

«ՖԱԶ»-Ի ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ո՞Ւ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ կատարողները կրակոցներ արձակելուց եւ Սերգեյ Գրիգորյանին սպանելուց հետո նույն գիշերը գնացել են օդանավակայան ու մեկնել Ռուսաստան:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ կատարողները մշտապես ապրել են ՀՀ-ում, այդ դեպքից հետո են երկիրը լքել ու հանդիսանում են ՀՀ քաղաքացիներ:

2024 թվականի հունիսի 11-ին կրակոցներ են հնչել Աջափնյակ վարչական շրջանում, եւ սպանվել է քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «ֆազ»-ը:

«Ժողովուրդ» օրաթերթը դեպքից անմիջապես հետո գրեց՝ կասկածներ կան, որ Սերգեյ Գրիգորյանի սպանությունը կապ ունի քրեական հեղինակություն Ռուստամ Ստեփանյանի՝ «չաղ Ռուստամի» հետ, քանի որ վերջիններս շատ լարված հարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ, ու երկու ամիս անց կասկածները փարատվեցին:

Տարիներ առաջվա հին վեճերը

Դեռեւս 2020 թվականից անձնական հարցերի շուրջ առաջացած վեճի, այնուհետեւ՝ 2021թ. հունվարի 13-ին Երեւան քաղաքի Դավիթ Բեկի փողոցի 109/10 հասցեում գտնվող «Թոխմախի» գերեզմանատան ավտոկայանատեղում 36-ամյա անձի՝ Ռուստամ Ստեփանյանի եւ նրա կողմնակիցների ուղղությամբ կրակոցներ արձակվելու պատճառով թշնամական հարաբերություններ են ձեւավորվել մինչեւ այդ մտերիմ, «Ֆազ» մականունով հայտնի Սերգեյ Գրիգորյանի եւ Կոտայքի մարզի 36-ամյա բնակիչ «չաղ Ռուստամ» մականունով հայտնի Ռ. Ստեփանյանի միջեւ:

Դրա հետեւանքով հետագայում վերջիններիս մտերիմների մասնակցությամբ տեղի են ունեցել մի շարք միջադեպեր, այդ թվում՝ զենքի գործադրմամբ, որոնց կապակցությամբ նախաձեռնվել են քրեական վարույթներ, ու գործը դատարանում է:

Շուրջ 2 ամիս իրավապահներն ստուգում էին քրեական հեղինակություն «չաղ Ռուստամին» ու արդյունքում վերջինիս ձերբակալեցին ու կկալանավորեն՝ որպես պատվիրատու, սակայն կատարողները չկան:

ԱԱԾ-ն միջամտեց

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ այս աղմկահարույց սպանությունը բացահայտելու համար ներգրավվել է նաեւ ԱԱԾ-ն: Իրավապահները պարզել են, որ 2024թ. հունիսի 11-ին սպանություն կատարողները մի քանի անգամ հանդիպել են Կոտայքի մարզում գտնվող, Ռուստամ Ստեփանյանին պատկանող առանձնատանը: Ըստ նախաքննական մարմնի՝ սպանություն կատարողներ Հ. Սահակյանը եւ Սու. Գրիգորյանը, իրենց հետ վերցնելով հանցակիցների հետ ապօրինի կերպով ձեռք բերված, լիցքավորված ինքնաձիգը, հեռադիտակը, երկու զույգ ձեռնոց, երկու դիմակ, ոստիկանության երկու համազգեստ, ռադիոկապի երկու սարք, լապտեր, կեղծված հաշվառման համարանիշներով՝ «Opel Astra» մակնիշի ավտոմեքենայով ժամը 21:00-ի սահմաններում Ռ. Ստեփանյանի տնից ուղեւորվել են Երեւան քաղաք:

Սերգեյ Գրիգորյանի սպանությունն իրագործելու համար հարմար պահ եւ նպաստավոր տեղ գտնելու նպատակով Հ. Սահակյանը եւ Սու. Գրիգորյանը հետապնդել են նրան: Ժամը 23:15-ի սահմաններում Սերգեյ Գրիգորյանն ընկերների ուղեկցությամբ դուրս է եկել Երեւան քաղաքի Շինարարների փողոցի 25 հասցեում գտնվող բուքմեյքերական գրասենյակից, նստել մայթեզրին կայանված իրեն պատկանող «Toyota Land Cruiser» մակնիշի ավտոմեքենան ու պատրաստվել հեռանալ այդտեղից: Նկատելով, որ Սերգեյ Գրիգորյանը պատրաստվում է հեռանալ տվյալ վայրից՝ Հ. Սահակյանը, «Opel Astra» մակնիշի ավտոմեքենան կտրուկ վարելով առաջ, բազմաթիվ կրակոցներ է արձակել Սերգեյ Գրիգորյանի ուղղությամբ, որի հետեւանքով վերջինս գլխի եւ մարմնի տարբեր հատվածներում ստացել է կյանքի հետ անհամատեղելի բազմաթիվ հրազենային վնասվածքներ:

Հանցանքի կատարումն ավարտելուց անմիջապես հետո՝ Հ. Սահակյանը եւ Սու. Գրիգորյանը, չկարողանալով դեպքի վայրից հեռանալ իրենց ավտոմեքենայով, այլ ավտոմեքենաներին բախված լինելու պատճառով թողնելով այն դեպքի վայրում՝ դիմել են փախուստի՝ ճանապարհին տարբեր տեղերում գցելով ինքնաձիգը, իրենց հագին եղած ոստիկանության համազգեստները, դրանցից մեկի գրպանում առկա փամփուշտներով լիցքավորված փամփշտատուփը, լապտերը, ռադիոկապի երկու սարքերը, դիմակներն ու մեկ զույգ ձեռնոցը: Ապա փախչելով տարբեր ուղղություններով՝ երկուսն էլ միմյանցից առանձին գնացել են 36-ամյա անձին պատկանող, Կոտայքի մարզում գտնվող տուն, որտեղ նրանց սպասել է Ա. Կյուրեղյանը, իսկ քիչ անց միացել է նաեւ Ռ. Ստեփանյանը:

Հանցագործության կազմակերպման համար մեղադրվող քրեական հեղինակություն Ռուստամ Ստեփանյանը՝ «չաղ Ռուստամը» եւ Ա. Կյուրեղյանը, որը նրա վարորդն է, ձերբակալվել են:

Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ նշված երկու անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

Իշխանությունների հետ կապը

Ի դեպ, ըստ շրջանառվող լուրերի՝ Ռուստամ Ստեփանյանը վայելում է իշխանությունների հովանավորչությունը եւ մտերիմ հարաբերությունների մեջ է ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱԱԾ-Ն ՄՏԵԼ Է «ԼԱ ԴԵՖԱՆՍ»՝ ՔՆՆՈՒԹՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները երեկ՝ առավոտյան, դիմակավորված մտել են Տիչինայի փողոցում գտնվող «ԼԱ ԴԵՖԱՆՍ» հյուրանոց, աշխատակիցներին ոտքի կեցրել են հատակին ու խուզարկություն սկսել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ աշխատակիցներից ոմանց ցանկացել են տանել հարցաքննության: Ըստ ահազանգի՝ հյուրանոցը կապում են քրեական հեղինակություն Ալիկ Բանդուրյանի՝ «Նորատուսցի Ալիկի» հետ, ու չի բացառվում, որ խուզարկության նպատակը կապված է օրեր առաջ Սեւանում տեղի ունեցած սպանության հետ: Հիշեցնենք, որ սպանվեց ավագանու անդամ Արսեն Աֆինյանը: Նշենք, որ գործով խուլիգանության համար կալանավորվել է քրեական հեղինակություն Ալիկ Բանդուրյանի՝ «Նորատուսցի Ալիկի» եղբոր որդին՝ Լեւոն Բանդուրյանը, ու չի բացառվում, որ քրեական վարույթի շրջանակներում էլ իրավապահները մտել են նրան պատկանող տարածքներ՝ խուզարկության:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց հյուրանոցի հետ՝ հասկանալու համար, թե խուզարկությունն ինչ նպատակով է իրականացվել: Ի պատասխան՝ հյուրանոցի տնօրեն Արկադի Կիրակոսյանը մեզ հայտնեց, որ հյուրանոցը կապ չունի Ալիկ Բանդուրյանի հետ, ու այն, ինչ փնտրում էին, չեն գտել, ու այս ամենն ավելի շատ նման է շոուի. «Իրավապահները ընկել են շփոթմունքի մեջ ու հյուրանոցը կապ չունի Ալիկ Բանդուրյանի հետ, այլ անձի է պատկանում, այն ինչ ման են եկել, չեն գտել, ուղղակի շոու է: Իրենք ցենզուրայից դուրս բաներ էին պահանջում, ու ես ոչինչ չէի հասկանում, կրկնում եմ՝ շոուի նման էր, ցույց տան, թե աշխատում են»:

«Ժողովուրդ» օրաթերթի այն հարցին, թե կոնկրետ որ ուժային կառույցն է մտել, Արկադի Կիրակոսյանը նշեց, որ ԱԱԾ-ն, եւ որ որեւէ աշխատակցի հարցաքննության չեն տարել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՂԱԿԸ ԳՆԱԼՈՎ ՍԵՂՄՎՈՒՄ Է

Ուշագրավ իրավիճակ՝ քրեական հեղինակություն Ալիկ Բանդուրյանի՝ «Նորատուսցի Ալիկի» շուրջ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել, եւ իրավապահները մտել են նրան պատկանող բոլոր տարածքներ՝ խուզարկության:

Քրեական ենթամշակույթի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում 3 անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել, մեկին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով եւ 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, մյուս երկուսին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Վերջիններից մեկը ձերբակալվել է: Մյուսներին հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն է տրված: ArmLur.am-ին այս մասին ասաց Քննչական կոմիտեի նախագահի խոսնակ Գոռ Աբրահամյանը:

Նա տեղեկացրեց, որ վարույթի շրջանակներում ակտիվ ապացուցողական եւ վարութային գործողությունները շարունակվում են, այդ թվում՝ ԱԱԾ աշխատակիցների օժանդակությամբ, առանձին հասցեներում եւ օբյեկտներում կատարվում են միաժամանակյա խուզարկություններ:

ԴԱՆԱԿԱՀԱԲՈՂ ՏՂԱՄԱՐԴԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Հուլիսի 27-ի գիշերը՝ ժամը 22:07-ին, «Աստղիկ» բժշկական կենտրոնից ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ բուժօգնության են դիմել կտրած-ծակած վերքերով՝ 29-ամյա կին եւ ձեռքի կտրած-ծակած վնասվածքով՝ 58-ամյա տղամարդ: Ժամը 22:40-ին հիվանդանոցից հայտնել են, որ շտապօգնության խումբը բուժօգնության է տեղափոխել նաեւ 54-ամյա տղամարդու:

54-ամյա տղամարդը, սպանության փորձ կատարելու անմիջականորեն ծագած կասկածանքով, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մալաթիայի բաժին:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 26-ից հուլիսի 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 191 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ ԵՆ

Կառավարությունը հուլիսի 22-ից դադարեցրել է սահմանամերձ բնակավայրերում պետական աջակցությամբ վարկավորմամբ բնակելի տների կառուցման ծրագրի հայտերի ընդունումը: Այդ մասին մեր լրագրողին հայտնեցին ծրագրի մասնակից բանկից: Բանկից հայտնեցին՝ հավանական է, որ օգոստոսից վերսկսվի ծրագիրը, սակայն նոր պայմաններով: Նիկոլ Փաշինյանը, որպեսզի Ադրբեջանին անօրինական հանձնված 4 գյուղերի եւ Կիրանցի տարածքների համար սահմանագոտու բնակիչների զայրույթը մեղմի, հայտարարեց, որ բարձրացվում է բնակելի տների կառուցման համար պետության կողմից սուբսիդավորվող առավելագույն գումարի չափը՝ 16 միլիոնից դառնալով 21 միլիոն դրամ: Դա վերաբերում է միայն Կիրանց, Բաղանիս, Ոսկեպար եւ Բերքաբեր գյուղերի բնակիչներին: Բնակարանի կարիք ունեցող սահմանագոտու բնակիչները դժգոհում են, որ նշված ծրագրին մասնակցելու համար իրենք պետք է ունենային կառուցվող տան նախագիծ, այլ փաստաթղթեր, սակայն դրա գումարը չունեին եւ չկարողացան մասնակցել ծրագրին: Իրականում ծրագրի վաղաժամկետ դադարեցման պատճառը պետական բյուջեում ահռելի դեֆիցիտն է, որի հետեւանքով սահմանագոտու բնակելի տների կառուցապատման ծրագրի պայմանները փոփոխում են, որպեսզի դրանց հնարավորինս քիչ թվով ընտանիքներ մասնակցեն: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանել է, որ սահմանամերձ գյուղերում բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում առկա մեծ դիմելիության պատճառով ծրագիրը ժամանակավորապես դադարեցվել է: Ըստ ուսումնասիրությունների արդյունքների՝ կկայացվի որոշում՝ լավարկումներով, փոփոխություններով կամ նույն պայմաններով ծրագրի շարունակականության ապահովման վերաբերյալ:

ԺԱՅՌԵՐ՝ ԲԵԶՈՅԱՆԻ ԿԱՌՈՒՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Սահմանազատման անվան տակ Կիրանց գյուղի տարածքները եւ միջպետական ավտոճանապարհի Կիրանցի կամուրջը Ադրբեջանին հանձնելուց հետո՝ միջպետական ավտոճանապարհն այժմ ձգվում է Կիրանցի հարակից Աճարկուտ գյուղով՝ շրջանցելով Կիրանցը: Այդ կերպ միջպետական ավտոճանապարհը մոտ 2 կմ երկարացել է: Աճարկուտով ձգվող նոր ճանապարհը կառուցում է Լինսի հիմնադրամի ճանապարհաշինության ծրագրերի ղեկավար, «Ճանապարհ» ընկերության ղեկավար Էդվարդ Բեզոյանը: Նրա կառուցած ճանապարհի ոլորաններում ճանապարհի եզրի ժայռերը խաթարում են վարորդների տեսադաշտը, խոշոր բեռնատարների հանդիպակաց երթեւեկի դեպքում դրանց բախման վտանգ է առաջանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

SIGMA. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընթացող տարում կյանքի կկոչվեն գյուղատնտեսական մի շարք նախաձեռնություններ՝ «Կայուն եւ ներառական աճ Հայաստանի լեռնային բնակավայրերում» (SIGMA) ծրագրի շրջանակում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (SDC) կողմից: Այն իրականացնում են DAI Global UK (DAI) միջազգային ընկերությունը եւ իր հայաստանյան մասնաճյուղը՝ AMPERA խորհրդատվական ընկերության հետ համատեղ:

SIGMA-ի նպատակն է նվազեցնել աղքատությունն ու անհավասարությունը Հայաստանի լեռնային բնակավայրերում՝ կիրառելով ներառական, նորարարական եւ շրջակա միջավայրը չվնասող մոտեցումներ: Ծրագիրը համագործակցում է մասնավոր ընկերությունների հետ եւ համատեղ ներդրումների միջոցով նպաստում է Հայաստանում գյուղատնտեսության եւ գյուղական զբոսաշրջության զարգացմանը:

Ծրագրի շրջանակում Սպիտակ համայնքում ներդրվել է անձրեւացման ինքնաշխատ ոռոգման համակարգ: Այն հնարավորություն է տալիս կրճատելու ոռոգման ժամանակն ու ջրի կորուստը, նվազեցնելու ջրի մակերեսային հոսքի եւ էրոզիայի հավանականությունը, ինչպես նաեւ բարձրացնելու բույսերի մշակության տնտեսական արդյունավետությունը: Ծրագրի շրջանակում նույնատիպ ոռոգման համակարգ ներդրվել է նաեւ Վարդենիս համայնքում:

Ակտիվ աշխատանքներ են տարվում նաեւ Լոռու մարզի Մարգահովիտ բնակավայրում մեղվաբուծության գիտաարտադրական կրթական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Կենտրոնը տրամադրելու է մեղվաբուծական արտադրանքի որակի ապահովման եւ վերամշակման, մարքեթինգային, ինչպես նաեւ մեղվաբույծների վերապատրաստման ծառայություններ: Լոռու մարզի մեկ այլ բնակավայրում՝ Գյուլագարակում, իրականացվող ծրագրի արդյունքում ս.թ. աշնանից սկսած՝ գյուղացիական տնտեսությունները հնարավորություն կունենան օգտվել ագրոմեխանիզացիայի համապարփակ ծառայություններից: Վերջիններս ներառելու են հացահատիկային մշակաբույսերի եւ կարտոֆիլի մշակության բոլոր միջոցառումները:

Հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմերի մաքրման եւ ախտահանման կենտրոնը Վարդենիս համայնքում պատրաստ կլինի շահագործման սեպտեմբերին: Այն հնարավորություն կտա էապես բարելավել օգտագործվող սերմերի որակը եւ բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը: Աշնանը Գեղարքունիքում կգործարկվի նաեւ մրգերի երկարատեւ պահեստավորման սառնարանային տնտեսությունը, որը հնարավորություն կտա Վարդենիկի եւ հարակից 20 բնակավայրերի ֆերմերներին պահեստավորել կամ վաճառել իրենց գյուղատնտեսական արտադրանքը:

Այս տարվա մարտին մեկնարկած SIGMA ծրագիրը միտված է ապահովելու ավելի մեծ եկամուտ եւ ստեղծելու աշխատատեղեր Շիրակի, Լոռու, Տավուշի եւ Գեղարքունիքի մարզերի լեռնային գյուղական բնակավայրերի ֆերմերների եւ փոքր գյուղացիական տնտեսությունների համար: Ծրագրի տեւողությունն է տասը տարի: Առաջին փուլի շրջանակում՝ 2024-2026 թթ.-ին, նախատեսվում է իրականացնել 21 համատեղ ներդրումային ծրագիր, 15-ը՝ գյուղատնտեսության, 6-ը՝ գյուղական զբոսաշրջության ոլորտներում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՈՒՄ ԵՆՔ

ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՔԻՉ ՄԱՐԴ Է ԱՊՐՈՒՄ ՔԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկանում ենք, որ Հայաստանում մշտական բնակչության թվաքանակը 2024-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2,99 մլն մարդ, որը 2023-ի հունվարի 1-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից ավելի է 53 հազարով:

ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկանում ենք, որ սկսած 2023 թ.-ից՝ բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումն իրականացվում է ըստ ՀՀ 2022 թ. մարդահամարի արդյունքների, եւ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 2022թ. ցուցանիշը եւս վերահաշվարկվել է այդ հիմքով: 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է՝ 2 937.5 հազ.մարդ, իսկ 2024 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 2 990.9 հազ. մարդ:

Հարկ է նշել, որ ժողովրդագրական տվյալներում 2024-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի մեջ ներառված են նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածները:

Նշված տվյալներից հասկանում ենք, որ աճել է թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչությունը, սակայն Հայաստանի գյուղերում գրեթե երկու անգամ քիչ մարդ է ապրում, քան քաղաքներում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՆՉ ԱՐԺԵ ՀԱՆԳԻՍՏԸ ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ

Ամառային շոգ օրերը դեռ շարունակվում են, ինչը նշանակում է, որ դեռ կա ժամանակ վայելելու Հայաստանի բնությունը իր շքեղությամբ: ArmLur.am-ը հետաքրքրվել է՝ ի՞նչ արժե հանգիստը Եղեգնաձորում:

Այսպիսով՝ «Լուսիտու» հյուրանոցում մեկտեղանի սենյակների արժեքը 11,000 դրամ է, երկտեղանին՝ 18,000, երեքտեղանի լյուքս սենյակների արժեքը 20,000 դրամ է, ընտանեկան քոթեջների արժեքը՝ 36,000 դրամ:

Հյուրանոցում կա մարզասրահ, ֆիթնես սրահ, բիլիարդ, թենիս, վոլեյբոլի եւ բասկետբոլի դաշտեր, տարածքում հեծանիվներից օգտվելու հնարավորություն, առաջին բժշկական օգնություն, Wi-Fi տարածքում եւ ինտերնետ ընդունարանում, աստղադիտակ, ավտոկայանատեղի:

Վճարովի է ձկնորսությունը, սաունան, լողավազանը, մշակութային միջոցառումները, շրջագայությունները՝ ամենագնացներով, գիդի ծառայությունը, կոնֆերանսների եւ սեմինարների կազմակերպումը եւ այլն: Այստեղ ճաշի արժեքը 3500 դրամ է, իսկ ընթրիքը՝ 2800 դրամ:

«Արփա» հյուրանոցում կա ավտոկայանատեղի, այգի,Wi-Fi ինտերնետ: Այստեղ մեկտեղանի սենյակների արժեքը 17,000 դրամ է, երկտեղանին՝ 26,000 դրամ, լյուքս համարների արժեքը՝ 29,000 դրամ:

«Հասմիկ»գեսթ հաուս: Այս հյուրատունն առաջարկում է սենյակներ՝ առանձին լոգասենյակներով, կան նաեւ 3 սենյակներ՝ ընդհանուր լոգասենյակով: Հյուրերի տրամադրության տակ կան խոհանոցը, այգին, որտեղ կարելի է խորոված պատրաստել: Տարածքում կա անվճար Wi-Fi եւ ավտոկայանատեղի: Այստեղ մեկ օրվա արժեքը՝ 7000 դրամ է:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 36 պատահար. 4 մարդ զոհվել է, 61-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում, որպես մեկ ամբողջական համալիր, վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վ. Աղբյուրակ թաղամաս, 66 հասցեում գտնվող 8557,36 քմ պանսիոնատ եւ 0,64 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 388300000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վ. Աղբյուրակ թաղամաս, 65 հասցեում գտնվող 2622,46 քմ կիսակառույց պանսիոնատ եւ 0,21 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25700000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 15.08.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

PIN ԿՈԴԸ ՓՈԽԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բոլորն էլ ժամանակ առ ժամանակ վճարային քարտի PIN կոդը փոխելու կարիք են ունենում. ոմանք մոռանում են գործող կոդը, մյուսներն էլ անհանգստանում են, որ այն հասանելի է դարձել ուրիշների: Այս մտահոգությունը անհիմն չէ:

Պաշտոնական տվյալներով, Հայաստանում 2023թ.-ին 2021թ.-ի համեմատ կիբեռհանցագործությունների դեպքերն աճել են երկու անգամ: Հանցագործությունների զգալի մասը բաժին է ընկել բանկային քարտերով խարդախություններին. մարդիկ գումար են կորցրել, քանի որ նրանց քարտի տվյալները ինչ-ինչ պատճառներով հասանելի են դարձել երրորդ անձանց:

Ֆինանսների անվտանգության տեսանկյունից անչափ կարեւոր է, որ քարտապանները, անհրաժեշտության դեպքում, կարողանան արագ հասանելիություն ստանալ քարտի PIN կոդի փոփոխման գործիքակազմին:

Converse Mobile-ում արդեն հնարավոր է փոխել քարտի PIN կոդը

«Կոնվերս« բանկը ձգտում է հաճախորդներին առաջարկել թվային տիրույթում բանկային լավագույն փորձառությունը, այդ թվում՝ ապահովել վճարային քարտերի օգտագործման առավելագույն հարմարավետություն:

Հաշվի առնելով հաճախորդների զարգացող կարիքները՝ «Կոնվերս» բանկը Մոբայլ հավելվածում ներդրել է նորարարական հնարավորություն: Այսուհետ քարտի PIN կոդը փոխելու համար Բանկ այցելելու կամ բանկոմատներին մոտենալու կարիք չկա, բավարար է.

- Մուտք գործել Converse Mobile
- Ընտրել քարտը
- Մուտք գործել «Սահմանել PIN կոդ»
- Մուտքագրել նոր PIN կոդ
- Հաստատել

Մի քանի վայրկյան, մի քանի հպում, եւ Դուք կարող եք ոչ միայն փոխել քարտի PIN կոդը, այլեւ ակտիվացնել նոր ստացած կամ վերաթողարկված քարտը՝ սահմանելով PIN կոդ, ինչը նորություն է հայկական շուկայում:

Converse Mobile-ը վճարային քարտեր պատվիրելու եւ կառավարելու հարմարավետ ու անվտանգ հարթակ է

Ակտիվացնելով Converse Mobile հավելվածը՝ Դուք կարող եք անվտանգ միջավայրում.

- Պատվիրել տարբեր արժույթներով վճարային քարտեր, այդ թվում՝ թվային քարտեր
- Ակտիվացնել քարտերը
- Կատարել քարտային գործարքներ
- Կառավարել Visa քարտերով բաժանորդագրությունները
- Գործարքների արդյունքում կուտակել «Կոնվերս» միավորներ եւ փոխանակել նվերներով

Քարտերի տրամադրման մանրամասներին կարող եք ծանոթանալ բանկի կայքում կամ զանգահարելով 010-511-211:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, Կառավարության 03.08.2023թ. N1332-Ն եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Կոտայքի մարզի Զորաղբյուր համայնքի վարչական տարածքում (1.281698 հա) Վալերի Մեջլումյանի սեփական հողատարածքի ստորերկրյա ջրային ռեսուրսից գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով 1.1 լ/վ ջրաքանակով ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Արթուր Շաբոյանի՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական տարածքում 1.855 հա գյուղատնտեսական/ոռոգում նպատակով երկու հորից 18.5 լ/վ ջրաքանակով ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (3)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, Կառավարության 03.08.2023թ. N1332-Ն եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի վարչական տարածքում Վիրապ Մելքոնյանի կողմից դրենաժային համակարգից ձկնաբուծական նպատակով 50.0 լ/վ ջրաքանակով ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (4)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, Կառավարության 03.08.2023թ. N1332-Ն եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում (0.52 հա) «Դը Հ.Հովնանյան ֆեմիլի ֆաունդեյշն Մասնաճյուղ» ԱՍ-ի սեփական հողատարածքի ստորերկրյա ջրային ռեսուրսից գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով 2.75 լ/վ ջրաքանակով ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՏԱՐԱԶՖԵՍՏ»

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Օգոստոսի 10-ին եւ 11-ին «Հաղթանակ» զբոսայգում սպասվում է ամենահայկական իրադարձությունը՝ «ՏԱՐԱԶՖԵՍՏ» 6-րդ մշակութային-զբոսաշրջային փառատոնը, որը կազմակերպվում է «Տերյան մշակութային կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ:

Տարազի մեծ տոնակատարություն, որին կարող են մասնակցել մայրաքաղաքի բնակիչները, երեխաները, Երեւան այցելած զբոսաշրջիկներն ու հյուրերը:

Փառատոնի նպատակն է մասսայականացնել եւ հասարակության լայն շերտերին ներկայացնել ազգային հարուստ մշակույթն ու ավանդույթները, ինչպես նաեւ Հայաստան այցելող զբոսաշրջիկներին ծանոթացնել հազարամյակների պատմություն ունեցող հայկական արժեքներին:

Հայաստանի թանգարանների, արհեստագործ վարպետների, հայկական արտադրանքը ներկայացնող ընկերությունների մասնակցությամբ ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների եւ Հանրապետության փոքր համայնքների մշակութային արժեքների եւ ավանդույթների, ազգային խաղերի, պարերի եւ երաժշտության, ուսուցողակրթական ժամանցային ծրագրերի, ազգային հագուստի ցուցադրությամբ՝ ժամանակակից ներկայացմամբ տեղի կունենա «ՏԱՐԱԶՖԵՍՏ» 6-րդ մշակութային-զբոսաշրջային փառատոնը:

«ՏԱՐԱԶՖԵՍՏ» փառատոնի նպատակը հայկական մշակույթի եւ մասնավորապես հայկական տարազի ժողովրդականացումն է ինչպես հայ հասարակության, այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում. ներկայացնել ազգային հագուստը, մշակույթն ու ավանդույթները, ընձեռել ազգային արժեքներին ծանոթանալու հնարավորություն:

«Հայաստանի հարուստ մշակութային ժառանգությունը կարեւոր խթան է հանդիսանում մշակութային զբոսաշրջության զարգացման համար: Մեր բազմադարյա պատմությունը, ազգային ավանդույթները, ինքնատիպ արհեստն ու արվեստը Հայաստան այցելող յուրաքանչյուր զբոսաշրջիկի ուշադրության կենտրոնում են: ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն աջակցում է ազգային արժեքների պահպանմանը Հայաստանի եւ հայ ժողովրդի համաշխարհային ճանաչելիության, հեղինակության եւ հարգանքի ամրապնդմանն ու շարունակական բարձրացմանը: Այս համատեքստում կարող ենք նշել, որ «ՏԱՐԱԶՖԵՍՏն» իր ձեւաչափով յուրահատուկ մշակութային փառատոն է, որն ավելի հագեցած է դարձնում Հայաստանի զբոսաշրջային երթուղին»,-ասում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Սուսաննա Հակոբյանը:

«ՏԱՐԱԶՖԵՍՏ»-ը շատ զբոսաշրջիկների է գրավում դեպի մայրաքաղաք՝ հնարավորինս նպաստելով Երեւանի միջոցառումային զբոսաշրջության զարգացմանը, որի շրջանակում ներկայացվում է Հայաստանի բազմաշերտ եւ հարուստ մշակութային ժառանգությունը: Այս փառատոնը մեծ հետաքրքրություն է առաջացնում թե՛ դիզայներների եւ արհեստագործների ոլորտում, թե՛ զբոսաշրջության: Սա հիանալի հարթակ է լայն հասարակությանը ներկայացնելու ժամանակակից ժողվարպետներին, նրանց աշխատանքները, թանգարանների եւ դիզայներների հավաքածուները:

Կարեւորում ենք փառատոնի շրջանակում մասնակից այլ ազգերի մշակութային համայնքների, ինչպես նաեւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կազմակերպությունների մասնակցությունը, քանի որ Հայաստանում կողք կողքի համերաշխ ապրում ու ստեղծագործում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ», - ասել է «Տերյան մշակութային կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Լիլիթ Մելիքյանը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՖԵՍՏԻՎԱՌ»

ՏՈՆԱՎԱՃԱՌ՝ ՓԱՌԱՏՈՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանն աշխատակազմի պատասխանատուների, համայնքների ղեկավարների հետ Գյումրու Աբովյան փողոցում մասնակցել է «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնի շրջանակում անցկացվող տեղական արտադրանքի տոնավաճառին, որը կայացել է հուլիսի 27-ին:

Մուշեղ Մուրադյանը շրջել է մարզի համայնքները ներկայացնող տաղավարներում, ողջունել արտադրողներին եւ վստահեցրել, որ նման միջոցառումների կազմակերպումը տոնական միջավայրից բացի Շիրակի մարզ է բերել նաեւ տնտեսական մեծ ակտիվություն, ֆինանսական զգալի հոսքեր:

«Կառավարությունը մեծածավալ միջոցառումները մայրաքաղաքից ապակենտրոնացնում է մարզեր, մարզկենտրոններից էլ՝ հեռավոր համայնքներ: Անվճար տրանսպորտային միջոցներ են տրամադրվել, որպեսզի փառատոնի շրջանակներում ցանկացողներն այցելեն Մարմաշենի վանական համալիր, Հառիճավանք, Երերույքի տաճար եւ այլ պատմամշակութային վայրեր: Մենք լիազորությունների սահմաններում փորձում ենք անել հնարավորն ու անհնարինը, որպեսզի կարողանանք ոչ միայն պատշաճ ներկայանալ, այլեւ մարդկանց այսքան մեծ հոսքն ընդունել: Նման միջոցառումներին պատրաստվելն ու պատվով հաղթահարելը դարձել է աշխատանքային օրվա բնականոն գործընթաց:

Նախորդ տարի նույն ոգեւորությամբ Համահայկական խաղերի բացման հանդիսավոր արարողությանը Շիրակի մարզը հյուրընկալեց աշխարհի 42 երկրի 181 քաղաքից ժամանած հյուրերի եւ պատվով ճանապարհեց»,- նշել է Շիրակի մարզպետը:

Փառատոնի շրջանակում վաղ առավոտից բաց են մարզում գործող բոլոր մշակութային հաստատությունները, զվարճանքի վայրերը:

Հուլիսի 27-ին Գյումրու հրապարակում կայացել է Թաթա Սիմոնյանի մեծ մենահամերգը: Թաթան համերգը սկսել է «Ամենալավը դու ես» երգով, այնուհետեւ կատարել իր մյուս հիթերը: Երգչի ցանկացած կատարում ուղեկցվում էր ոգեւորությամբ:

«Ֆեստիվառի» հաջորդ կանգառն Իջեւանն է՝ օգոստոսի 10-ին, իսկ օգոստոսի 24-ին Եղեգնաձորում ելույթ կունենա «Լադանիվա» խումբը: Փառատոնը կազմակերպում է Հանրային հեռուստաընկերությունը կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ համատեղ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԵՆԻՍԻՍՏՈՒՀԻՆ՝ ԱՌԱՋԻՆ ԵԶՐԱՓԱԿՉԻ ՄԱՍԻՆ

Հայ թենիսիստուհի Էլինա Ավանեսյանը, կարիերայում առաջին անգամ WTA-ի մրցաշարի եզրափակիչում հանդես գալուց հետո, գրառում է կատարել սոցցանցերում:

«WTA-ի մրցաշարերում առաջին եզրափակիչս հավերժ կմնա իմ սրտում: Շնորհակալություն բոլորին, ովքեր աջակցեցին եւ օգնեցին ինձ այս նվաճմանը հասնելու ճանապարհին: Ես կշարունակեմ քրտնաջան աշխատել եւ դառնալ ավելի ուժեղ»,- գրել է 21-ամյա թենիսիստուհին:

Ավանեսյանը Ռումինիայի Յասի քաղաքում կայացած WTA-250 շարքի մրցաշարում չորս հաղթանակից հետո հասել էր եզրափակիչ, որտեղ երրորդ սեթում վնասվածքի պատճառով անավարտ էր թողել 17-ամյա ռուս թենիսիստուհի Միրա Անդրեեւայի դեմ մրցախաղը եւ պարտվել 7-5, 5-7, 0-4 հաշվով:

Հիշեցնենք, որ Էլինա Ավանեսյանը շուտով կփոխի մարզական քաղաքացիությունը եւ կներկայացնի Հայաստանը:

ՉԵՄՊԻՈՆԱԿԱՆ ՏԻՏՂՈՍ

Մանչեսթերում կայացած UFC 304 մրցաշարի գլխավոր մենամարտում կիսամիջին քաշային կարգի չեմպիոնական գոտու համար պայքար են մղել գործող չեմպիոն Լեոն Էդվարդսն ու Բելալ Մուհամադը:

ԱՄՆ-ն ներկայացնող 36-ամյա պաղեստինցին 5 ռաունդանոց մենամարտում հաղթել է մրցավարների միաձայն որոշմամբ եւ նվաճել գոտին:

Սա 32-ամյա անգլիացու համար չորրորդ պարտությունն էր օկտագոնում, նա ունի 22 հաղթանակ: Մուհամադն օկտագոնում անցկացրել է 27 մենամարտ, տարել՝24 հաղթանակ եւ պարտվել՝3 անգամ:

ՀԱՅ ԲԱՍԿԵՏԲՈԼԻՍՏԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՆԳՅԱԿՈՒՄ

Բասկետբոլի Մ18 տարեկանների տղամարդկանց Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի լավագույն խաղացողների հնգյակում է ընդգրկվել Հայաստանի հավաքականի խաղացող Սեբաստիան Հացակորզյանը: Այս մասին հայտնում է ՀԲՖ-ի մամուլի ծառայությունը:

Սեբաստիան Հացակորզյանը եւ Հայկ Կարախանյանը Ալբանիայի դեմ առաջնության երրորդ տեղի խաղում եղել են մեր հավաքականի ամենաարդյունավետ խաղացողները:

Նշենք, որ Հայաստանի հավաքականը Եվրոպայի առաջնության C դիվիզիոնում երրորդ տեղի համար պայքարում 53:79 հաշվով պարտվեց Ալբանիայի հավաքականին:

● *Հուլիսի 29-ին՝ժամը 20:30-ին, թատրոն տանիքում կցուցադրվի «Մեծն Գեթսբի» ներկայացումը՝ Ֆ. Ֆիցջերալդի համանուն ստեղծագործության հիման վրա: Տոմսերի արժեքը՝6000-7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որքանո՞վ են ղաբտղանված ադասան հայցողների անձնական տվյալները:
(Նիկոլայ Ավետիսյան 34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողների հայտնած տեղեկությունները գաղտնի են: Դրանք չեն հաղորդվում իրենց երկրների իշխանություններին, ներառյալ՝ դեսպանատներին, կամ որեւէ այլ անձի: Այդ տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել միայն ապաստան հայցողի գրավոր համաձայնության դեպքում: Հարցազրույցի գաղտնիությունը երաշխավորված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

«Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ապաստանի շնորհումը պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, եւ սույն օրենքի կամ ապաստանի եւ փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որեւէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմնի կողմից տեղեկատվության փոխանցումը զանգվածային լրատվական միջոցներին միջնորդավորված կերպով հանգեցնում է վերը նշված օրենքի խախտմանը, ուստի նման ցանկացած հայտ մերժվում է Միգրացիոն ծառայության կողմից:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. 9-րդ դասարանի սովորողը բնություններին չներկայանալու դեպքում ինչպե՞ս կարող է հետագայում այն վերահանձնել:
(Լուսինե Հովհաննիսյան 37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 (բանավորի դեպքում) կամ 1-7 (գրավորի դեպքում) միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը չորսն է, վերաքննություն է հանձնում իր ուսհաստատությունում (բացառությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 3 մայիսի 2012թ. N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եւ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի» 20-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերով սահմանված քննական առարկաների) հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առաջադրանքները կազմվում են նշված կարգի 22-24-րդ եւ 33-րդ կետերի պահանջներին համապատասխան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Հայաստանի Տիրինկատար հնավայրի վիշապաքարերը եւ մշակութային լանդշաֆտը ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 46-րդ նստաշրջանում քննարկվել եւ հավանության է արժանացել Հայաստանի կողմից ներկայացված հայտը վերոնշյալի մասին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 13 +19 + 23
Կոտայքի լեռներ	+8 + 12 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 16+ 18 +25 + 27
Գեղարքունիք	+ 8+ 12 +17 + 20
Լոռի	+ 11+ 14 +18 + 21
Տավուշ	+ 14+ 18 +20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +25 + 28

Արարատ	+ 18 + 20 +28 + 30
Արմավիր	+ 17+ 19 +28 + 30
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +28 + 30
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 11 + 14 +18 + 21
ԼՂՀ	+ 12 + 16 +18 + 20
Երեւան	+ 18 + 20 + 30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.7.2024**
Հասցեն՝ Գերաքրքրության մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*